ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2014 թվականի N 336-Ա

Հ. ՄԱՀՏԵՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 110-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.2-րդ կետը, ինչպես նաև *Հ. Մահիրեսյանի* անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Հովհաննես Մահիրեսյանին*** 2014 թվականի օգոստոսի 28-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2012 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N 7 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով (տնօրենի թափուր պաշտոնում) պաշտոնի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար նշանակել ընկերության ընտանեկան բժիշկ՝ ***Կարինե Զոհրաբյանին***:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 28
ք. Հրազդան